

**ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ՄԱՆԴՐՈ ԲԵՆԲՈՒԴՅԱՆԻՆ
«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱ ՆԱՏԱՆԱՅ
ԱՌ ՄԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱԲԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ,
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՄԱՆԴՐՈ ԲԵՆԲՈՒԴԵԱՆ,
ՈՐ ՅԵՐԵՒԱՆ**

Ուրախությամբ Կրեյկացանք, որ Աստուածայայտության 2000 թուականը Ձեզ համար յիշարժան է նաև գիտական գործունեության 45, արխիպային բնագաառում Ձեր ծառայության 40 եւ Վազգէնեան Նոգեւոր դպրանոցի կեանքին համընթաց մանկավարժական Ձեր նուիրումի 10-ամեայ յոբելեաններով:

Այս նշանակալի առիթով համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սիրով ու բերկրանքով բերում ենք Ձեզ Նայրապետական Մեր օրինութիւնն ու ջերմ շնորհատրանքները:

Պապուարժան գաւակ Նայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, Դուք Ձեր կեանքի ողջ ընթացքին, իբրեւ հաւարարիմ ու նուիրեալ գաւակ Առաքելական մեր Մայր Եկեղեցու, հոգեւոր եւ մտաւոր Ձեր ողջ կարողութիւնները անմնացորդ կերպով ի սպաս էք դրել յանուն նրա շինութեան ու պայծառութեան: Ձեր ուսերն, արդարեւ, ծանրաբեռն են ազգօգուր ու եկեղեցաշէն բազմարդիւն վաստակով:

Տասնամեակներ շարունակ Դուք կենդանութեան շունչ էք հաղորդել խունացած փաստաթղթերին՝ լուսաբանելով Նայոց Եկեղեցու պարամութեան նոր շրջանի փակ էջերը: Ձեր անդու ու անյոգնաբեկ աշխատանքով այսօր սեղանի վրա են «Վաւերագրեր Նայ Եկեղեցու պարամութեան» շարքի եօթ հատրները, որ պարունակում են գիտական կարեւորութիւն ունեցող արժէքատր հարիրատր վաւերագրեր:

Նոյն սիրով ու նախանձախնդրությամբ Դուք գնահատելի եւ անփոխարինելի նպաստ էք բերել Սեւանի Վազգէնեան հոգեւոր դպրանոցի կեանքում՝ հիմնադրման օրից դասաւանդելով այնպեղ եւ անմնացորդ նուիրումով աջակցելով նրա կայացմանը: Այսօր փասնետրոդ յոբելեանն է նշում մեզ բոլորիս համար անչափ թանկ ու հոգեհարազար կրթօջախը, որի հինգ սերունդ շրջանաւարտներն արդէն սպասաւ-

րում են բարեպաշար ու հաւաքատու մեր ժողովրդին: Նրանք բոլորն էլ երախտագի-
 րութեամբ են յիշում Ձեզ, գնահատում ի նպաստ իրենց հոգեւոր կրթութեան ու դաս-
 փարակութեան ներդրում Ձեր ջանքերն ու անսպառ եռանդը, որը լաւագոյն վկա-
 յութիւնն ու վարձատրութիւնն է Ձեր անսակարկ նուիրումի:

Յարգարժան պրն Բեհբուդեան. ի գնահատութիւն Ձեր մեծ վաստակի, գիտական
 գործունեութեան 45 եւ արխիւային աշխատանքի 40-ամեայ յոբելեանների առիթով,
 Նայրապետական այսու Մեր Կոնդակով սիրով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր
 Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՆԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրբի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնու-
 թեամբ միշտ բաջատողջ ու եռանդաշատ, շարունակէք Ձեր արդիւնաշատ ծառայու-
 թիւնը բերել մեր Մայր Նայրենիքին, Սուրբ Եկեղեցուն ու հաւաքացեալ ժողովրդին:

Թող Աստուած ամենուր եւ յամենայնի օգնական լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց ան-
 դամներին:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Նոգոյն եւ յաւեր օրհնեալ ի Մէնջ».
 ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուա Կոնդակս ի 29-ն Նոկտեմբերի
 Յամի Տեառն 2000 եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
 ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
 ընդ համարաւ 30